



Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(Ակնարկ հայ կետադրության պատմությունից)



րավոր խոսքի մեջ գործածվող, հանրության կողմից ընդունված և պետականորեն սահմանված կետադրական նշանների վերաբերյալ կանոնների համակարգը կոչվում է կետադրություն: Չափազանց մեծ է կետադրության դերը գրավոր խոսքի կարգավորման գործում: Գրողն իր մտքերը ճիշտ արտահայտելու համար օգտագործում է տրոհության, առդասնության և բացահայտության նշաններ, և ընթերցողն այդ նշանների օգնությամբ հասկանում է գրողին, ճշտությամբ վերարտադրում նրա մղտքերը: Այսպիսով, շնորհիվ կետադրական նշանների, գրողն ու կարդացողը փոխադարձաբար հասկանում են միմյանց: Կյանքում հաճախ գրողը դառնում է կարդացող, իսկ կարդացողը՝ գրող:

Կետադրական նշանները գրավոր խոսքի անհրաժեշտ տարրն են կազմում և լեզվի ընդհանուր սխառնմամբ մասնակցում են հաղորդակցման գործին, ուստի հասկանալի է, որ կետադրությունը բոլորի համար պետք է լինի միասնական:

Հայերենի կետադրության պատմությունը կապված է հայաբառ և հայատառ գրականության սկզբնավորման պատմության հետ: Հայ դրերի պյուտից անմիջապես հետո (Ն դար) մատենադրությանը գտագրնից ստեղծվում է նաև հայ քերականական գրականությունը: Կետադրության հարցերը անցյալի քերականական ձեռագիր աշխատություններում կարևոր տեղ են գրավել: Խնչպես այժմ, անցյալում ևս կետադրությունը կապ-

վել է շարահյուսության հետ, խարսխվել նրա վրա:

Գրաբարի շրջանի կետադրության մասին իշխել է այն սխալ կարծիքը, որ իբր թե կետադրություն արդի հասկացությամբ չի եղել, որ հին գրչագրերում իբր թե իշխել է անասելի շփոթ և տարերայնություն: Այս ամենը փխել է նրանից, որ մենք հանդամանորեն չենք իմացել մեր գրավոր խոսքի շարահյուսությունն ու կետադրությունը: Հայերենի հնչյունաբանության, բառագիտության և ձևաբանության մասին բազմաթիվ լուրջ և արժեքավոր աշխատություններ են գրվել հայ, ռուս և եվրոպական գիտնականների կողմից, իսկ շարահյուսության և նրա հետ սերտորեն առնչված կետադրության մասին մինչև այժմ ոչ մի աշխատություն չի գրվել: Գրաբարի շրջանի կետադրության վերաբերյալ եղած մասնակի դիտողությունները, որոնք տրված են հնագրության և քերականության պահպան հարցերի քննարկման կապակցությամբ՝ խիստ անբավարար են: Այդ դիտողություններում ընդհանրապես ասված է, թե քանի կետադրական նշան են գործածել մեր նախնիքները՝ առանց ցույց տալու դրանց գործածության ժամանակը, ծագումը, արտահայտած իմաստները, կրած փոփոխությունները և այլն: Գրաբարի շրջանում ունեցել ենք մշակված, կանոնավոր խոսք և այդ խոսքը տրոհող ու բացահայտող հարուստ, երբեմն ինքնատիպ ու մտածված նշաններ:

Կետադրության հարցերի ուսումնասիրության տեսակետից աշխարհաբարի շրջանը փոքրիշատե բարավոր վիճակումն է գտնվում: Քերականության ընդհանուր հարցերը մշակելիս հայագետներ Ա. Այտրյանը, Ս. Պալասյանը, Մ. Աբելյանը որոշ չափով անդադարձել են նաև կետադրության հարցերին:

Կետադրական նշանների գործածությունը հայերեն լեզվում սկսվել է պրերի գլուտի հետ զուգընթաց, Ե դարի սկզբներին: Առաջին դրավոր փաստագիրը, որի միջոցով իմանում ենք հայերենի կետադրական նշանների տեսակների ու քանակի մասին, հույն քերականի՝ Դիոնիսիոս Թրակացու հայ մեկնիչների քերականական աշխատություններն են: Հետագա աղբյուրները հանդիսանում են հայերեն վիմագիր արձանագրություններն ու գրչագիր մատյանները:

Գրաբարի շրջանում կետադրությունն աստիճանաբար կազմակերպվել է միջակետը և ստորակետը (կէտ աւարտեալ, միջակ և ստորակէտ): Մնացած նշանները դասվել են առողջագրության հասկացության մեջ և կետադրական նշաններ չեն համարվել: Այս շրջանում ճանաչվել է առողջագրության տաս նշան՝ շեշտ, բոսթ, պարույկ, երկար, ստղ,

թավ, սոակ, Լնթամնա, ապաթարց և սոտրատ:

Չակերտը, մակակետը, գծիկը, վերնագրերից հետո օգտագործվող դանապան նշանները, համառոտագրության և վրիպակները նշող պայմանական այլ նշանները քերականությանը նվիրված գրչագրերում չեն արտացոլված, չնայած դրանք գրավոր խոսքի մեջ գոյություն են ունեցել: Կետադրությունը, չնայած հայ գրավոր խոսքի վաղ դրությունը, եղել է բավականաչափ հարուստ ու ծավալված: Կետադրական մի շարք նշաններ խիստ ինքնատիպ են ու ծագումով միանգամայն ինքնուրույն: Հարցական և բացականչական նշանների, չակերտի և ստորակետի վաղ գոյությունը, ձևը և առաջին երկուսի գործածության նպատակահարմարությունը ցույց են տալիս հայերենի զարգացման աստիճանը, գրավոր խոսքի կարգավորումը և բանավոր, կենդանի խոսքին մոտենալու առավելությունը:

Այս բոլորով հանդերձ, կետադրությունը մի ընդհանուր սիստեմի տակ չի դրվել, հայ պետականության բացակայության և զրպարոցների սահմանափակ թվի պատճառով:

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐԻ ԾՐՋԱՆՈՒՄ, ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բարդ նախադասությունները գրաբարում կազմվել են բավական կուռ և մշակված մի սիստեմ:

Բարդ նախադասության կառուցի մեջ մեծ տեղ պարզ նախադասություններն իրար նկատմամբ, արդի լեզվի նման, ունեցել են երկու տեսակի՝ հարաբերություն՝ համադասական և ստորադասական: Բարդ համադասական նախադասության կազմում եղած պարզ նախադասությունները միմյանց չեն լրացրել, այլ հանդես են եկել համադարձ պաշտոններով՝ ընդհանուր իմաստով կապվելով իրար հետ և միասին արտահայտելով մի ամբողջական, բարդ միտք: Համադասական նախադասություններն իրար հետ կապվել են համադասական շաղկապներով կամ միմյանց ևն հաջորդել առանց կապակցական բառերի:

Բարդ ստորադասական նախադասության կազմում եղած պարզ նախադասությունները հանդես են եկել գլխավոր նախադասության և գլխավորի նկատմամբ երկրորդական, լրացնող, ստորադասավոր նախադասությունների պաշտոնով: Երկրորդական ստորադասական նախադասությունները գլխավորի հետ միա-

ցել են կապակցական բառերով և ստորադասական շաղկապներով:

Լեզվի մեջ տեղի ունեցող կարգավորումներից մեկը՝ նախադասության կամ հնչիկի արտահայտությամբ «բան»-ի դրսևորումը, նրա մեջ սահմանվող դադարներն են, որոնք արտահայտվում են համապատասխան կետադրությամբ: Պետք է ասել, որ հնչիկը բավական պարզ ու հստակ պատկերացում են ունեցել խոսքի և նրա մասերի փոխհարաբերությունների և խոսքի դերի ու նշանակության մասին: Թե որքան մեծ արժեք են տվել նախադասության մեջ կետադրությանը, երևում է քերականությանը նվիրված ձեռագիր դասագրքերում եղած ձևականություններից: Կետադրության հարցին անդրադառնալով, Դավիթ քերականը «Մեկնություն քերականի» աշխատության մեջ գրում է. «Թակ ի տրոհութենէն զպարունակ միտան տեսանեմք, այսինքն, յորոշելոյ զբանսն և զատանելոյ: Իսկ ոչ ուղիղ տրոհեմք ըստ չար փոհակերի զանգաման ոչ ուղիղ յաւելի, որ է զմիտանի մտաց և զբանն ի բանէ տչ զատուցանել: և պարունակայն ի նմա անյայտացաւ միտք, զի ի լսողէն

զանխլացողց և ինքն անարուեստ ցուցաւ¹։
Դավիթ քերականը նախադասութեան կամ նրա ավելի մեծ միավորի՝ խոսքի տրոհման հարցը դնում է գործնական հոդի վրա։ Մտքերը գրավոր արտահայտվում են նրա համար, որ ընթերցողները հասկանան, իսկ եթե բարդ նախադասութեանները կհտադրութեամբ չեն տրոհվում, նրա առանձին բաղադրիչ նախադասութեանները կամ նախադասութեան առանձին անդամները չեն դատվում միմյանցից, ապա ընթերցողը ոչ միայն կարող է հեղինակին ճիշտ չհասկանալ, այլև աղավաղել նրա մտքերը։ Ժիշտ ու մեկին գրել, կանոնավոր տրոհել «բանի բանէ», նշանակում է ճիշտ հաղորդել իր մտքերը և ընթերցողին հասկանալի դարձնել։

«Տրոհութիւն ասէ զփոփոխութեան և զորոշումն բանիցն և տանց յընթերցողութեանն. ոչ ընդ միմեանս շաղախելով։ զայլևայլ խորհուրդան»,— գրում է հետագա շրջանի քերականներից մեկը (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2329, էջ 64բ)։

Խոսողի կամ գրողի արտահայտած մտքերը նրա «խորհուրդներն» են, որոնք պետք է հատկանշալի դառնան ոմակնորի կամ ընթերցողի համար, այլապես միմյանց «շաղախվելով» կաղավաղեն այն և փոխադարձաբար իրար չեն հասկանա, հետևապես մարդկանց միջև շփում և հարաբերություն չի կարող լինել։

Ա) ՎԵՐՋԱԿԵՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Դիտելիս թրականացու հայ մեկնիչները (Ե—է դարեր) կետադրութիւն ասելով հասկանում էին Թրեք կետ՝ վերջակետ, որ կոչվել է ակետ աւարտեալ, «միջակ», որ այժմյան հասկացողութեամբ միջակետն է, և «ստորակետ»։ Այս դասակարգումը ժառանգաբար պահվել է նաև հետագա քերականների մոտ։

Կրկնակետը, որպես վերջակետ, չի երեւում ո՛չ քերականական աշխատություններում և ո՛չ էլ ձեռագրերում մինչև տասնութրորդ դարը։

Վերջակետը հին ձեռագրերում (Ե—Թ դարեր) այժմյան հասկացողութեամբ ոչ թե կրկնակետով (:) էր դրվում, այլ մի կետով (.), որն այսօր միջակետ է կոչվում։ Վերջակետն իր գործածության տեղով և մասամբ ձևով տարբերվել է «միջակ» կետից ու ստորակետից։ Կետն առհասարակ ունեցել է քառակուսի, հորեմն էլ քառակուսի

ձև։ Վերջակետի իմաստով գործածվելիս այն դրվել է տողի վերևում, իսկ միջակետի և ստորակետի իմաստով՝ տողի վրա։

Վերջակետը (կէտ աւարտեալ) դրվել է պարզ և բարդ նախադասութեանների վերջում և համարվել է խոսքի (նախադասութեան, որը երբեմն բազմաբարդ է եղել) ավարտման, վերջնական դադարի կամ, ինչպես հենրն էին ասում, «խորհրդի» վախճանը։ Ըստ Ստեփանոս Սյունեցու, «Իսկ ասելն եթէ կէտ է տրամախոհութեան անդեցելոյ նշան. զայս զաւարտեալ վիտէն ասէ, զվախճան հնթադատութեան» (Ստեփանոս Սյունեցի— «Մեկնութիւն քերականի»²)։

Համար Արևելցիք վերջակետը բնորոշելիս հիմք է ընդունում նախադասութեան չափն ու խորհուրդը, այսինքն՝ երբ այն մի ամբողջական միտք է արտահայտում. «աւարտեալ է, յորժամ չափովն և խորհրդովն աւարտի»։

«Աւարտեալ կէտ»-ը (վերջակետ) քերականներից ոմանք անվանել են «արքա», «խոստումն», «վճիռ», «վախճան»։

Այս նոր ձեռագրում վերջակետը համարվել է նաև «վճար և հանգիստ բանին»։

Շապի Նչեցի վերջակետը համարում է «աւարտեալ կէտ», սակայն ավելացնում է. «որ նոյն ինքն ասի և սոուն» (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2373, էջ 53բ)։

Այսպիսով, նախադասութեան («բան»-ի) հասկացողությամբ, ըստ հին քերականների, միանգամայն պարզ է. նա ցույց է տալիս մտքի վախճանը. այդ կետի վրա կարդացողը դադար է տալիս, հանգստանում, շունչ է առնում ճշտ աւրինի ճանապարհորդաց, որ նստին և հանգիստ առնան» (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 1115, էջ 127բ)։

Սակայն այս ամենը ձևակերպված է քերականների աշխատություններում, իսկ մնացած վրոնական և այլ բնույթի ձեռագրերում կ'ընչ վիճակի մեջ է կետադրությունը։ Ամենահին հայերեն դրավոր վկայությունները, որ մեզ են հասել, վիմագիր արձանագրություններն են։ Ամենավաղ շրջանի արձանագրություններից հայտնի են Տեկտրի և Երուսաղեմի (2 դար), Թալինի և Մաստարայի (է դար) արձանագրությունները, որոնք, դժբախտաբար, այնքան աղքատ են կետադրության դործածության հարցում, որ դժվար է դրանց վրա հանվելով որևէ որոշակի կարծիք հայտնել այս խնդրի վերաբերյալ։ Փոքրիկ քարի վրա պետք էր տեղավորել ահագին նախադասու-

¹ Н. Адонц, «Дионисий фракийский и армянский талкватели его», СПб, 1915 г., стр. 88.

² Ն. Ազոնց, նույն տեղում, էջ 197։

թյուններ՝ բառերի մեծ քանակությամբ: Իսկ սա արդեն շատ դժվար գործ է: Գրելու արվեստը, նյութը, որի վրա գրում էին, և ժամանակը ստիպել են գրիչներին կատարել խնայողություն, կրճատել ինչպես տառերը, այնպես էլ կետերը: Այս է պատճառը, որ մեզ հասած վաղագույն շրջանի գրավոր վկայությունները՝ վիմագիր արձանագրությունները, համարյա թե կետադրություն չունեն: Այդ արձանագրություններում գործածվել են միջակետը, կրկնակետերը և պատիվ (—) կոչվող նշանը: Երկու կամ երեք կետերով տրոհված են թվական արժեքով գործածված տառերը:

Եգիպտոսում գտնվել է հայատառ հունարենով գրված պապիրուսի մի պատառիկ: Ուտամասիրելով այդ պատառիկը՝ Հ. Հակոբոս Տաշյանը հանգում է այն եզրակացության, որ «Պարզ կետ, ստորակետ, բովի և այլն չենք գտնել ամենևին: Առհասարակ գործածվածն է երկու կետ կամ մեկ «վերջակետ» (·) կոչվածը: Անշուշտ նույն վերջակետի կամ կրկնակետի դիտմամբ՝ գծված կտեսնենք հաճախ տրոհության ուրիշ նշան մ'ալ, որ բոլորովին կնոշանանա եվրոպացւոց արդի զարմացական նշանին (·) հետո»³։ Բնական է, որ մայր երկրից դուրս գտնված ամենահնագույն ձեռագիր պատառիկը չէր կարող բնորոշ լինել իր կետադրությամբ և մեզ հիմք չի տալիս նրանով դատելու հայերենի կետադրության սխեմայի մասին: Սակայն ուշագրավ է այն հանգամանքը, որ այդ ձեռագիր պատառիկում չկան միջակետը, ստորակետը և բովի: Ինչ վերաբերում է կրկնակետին, որ սրտը տեղեր նմանվում է արդի եվրոպական լեզուների զարմացական նշանին, պետք է ասել, որ այն ավելի շատ գրչի արդյունք է. ըստ իս, գրողն անփութ է եղել և կետի ծայրն երկարացել է, որի պատճառով էլ եվրոպական արդի զարմացական նշանի ձևն է ստացել: Այս բանը եվրոպականի ազդեցությամբ բացատրել չենք կարող (և Հ. Տաշյանն էլ այդ չի ակնարկում), քանի որ այդ լեզուների վաղ շրջանի գրություններում զարմացական նշանի գործածությունը գոյություն չի ունեցել: Այդ մասին է վկայում ուս բանասեր Վ. Կլաուսկին, որն զբաղվել է եվրոպական հինգ լեզուների կետադրական նշանների ուսումնասիրությամբ: Իր աշխատության մեջ Վ. Կլաուսկին հետևյալն է գրում... «Բացականչական նշանը և չա-

կերտները մտածված են բավական ուշ շրջանում, Ժէ դարի վերջում»⁴:

Այսպիսով, կրկնակետ վերջակետի գործածությունը հանդես է գալիս նույնիսկ է դարում, սակայն մայր երկրից դուրս և այն էլ կրում է խիստ պատահական բնույթ: Հետագա երկու դարերի մեզ հասած ժառանգությունը դարձյալ վիմագիր արձանագրություններն են, որոնք, ինչպես ասացինք, կետադրության հարցում մեզ ոչնչով օգնել չեն կարող:

Գրավոր վավերագրերի և այլ կոթողների բացակայության հետևանքով հնարավոր չէ որևէ դրական բան ասել Ե—Բ դարերի գրավոր խոսքում գործածվող կետադրության մասին, ինչպես տեսանք, այդ ժամանակաշրջանի կետադրության մասին գոյություն ունեն միայն Դիոնիսիոս Թրակացու քերականության հայ մեկնիչների ժլատ հաղորդումները:

Միակ հնագույն ձեռագիր վկայությունը, որ ինքնագիր վիճակում հասել է մեզ, Լավարյան ձեռարանի լուսատիպ Ավետարանն է, որ գրվել է Վանդանում, 887 թվականին: Այս ձեռագիր Ավետարանում կետադրության կիրառումն արդեն նյութել են փաստ է, ունի գործնական նշանակություն և ոչ թե տեսական, ինչպես վաղ շրջանի քերականների գրադրերում: Այն՝ ինչ կա այստեղ, ժամանակի ճշգրիտ պատկերն է տալիս: Այս ձեռագրում, հակառակ քերականների տեսական ջարդարանքի, գործածվել են մի կետը (միջակետը), չակերտը, որ ստորակետի ձև ունի, և պատիվ կոչված նշանը: Բացի այս, պատիվն ու երկարացման նշանը միասին գործածվել են լուսանցքում որպես պարբերանիչ: Միջակետն իր գործածությամբ ունեցել է տարբեր իմաստ և նշանակություն՝ նայած թե ինչ տրոհական դեր է կատարել: Այս ձեռագրում կետն ունի քառակուսի, երբեմն քառանկյունի, երբեմն էլ թավ ստորակետի ձև: Տողի վերևում դրվելիս այն համարվել է վերջակետ, իսկ տողի վրա, նայած նրա արտահայտած պաշտոնին, մերթ որպես միջակետ, մերթ որպես ստորակետ:

Լավարյան ձեռարանի լուսատիպ Ավետարանում յուրաքանչյուր նախադասություն սկսվում է գլխագրով: Ի դեպ, պետք է ասել, որ նախադասության մեջ հատուկ գոյականներն անգամ գրվում են փոքրատուով, նախադասության ավարտումով ընդմիջվում է խոսքը, գրվում է վերջակետ և հաջորդ նախադասությունն անպայման սկսվում է նոր տողից և գլխատառով:

³ Հ. Հակոբոս Տաշյան, «Ակնարկ մը հայ հնագրության վրա», Վիեննա, 1898 թ., էջ 100:

⁴ В. Классовский; «Знаки препинания в пяти важнейших языках», СПб, 1882 г., стр. 3.

Սկսած տասներորդ դարից, հայ գրիչների մեծ մասն արդեն որպես վերջակետ գործածում է կրկնակետը (:), որ նման է այսօրվա վերջակետին թե՛ իր ձևով, և թե՛ իր արտահայտչական նշանակությամբ⁵։ Այս դարից արդեն վերջակետը դառնում է կտրկետ և դրվում է տողի վրա, սակայն որոշ ձեռագրերում այն երբեմն հանդես է գալիս քառանկյունի գծերի ձևով։

Վերջակետի գործածությունը, այսօրվա նման երկու կետով, ավելի կանոնավոր ու հաստատուն է դառնում ԺԱ—ԺԲ դարերից։ Սրանից հետո կրկնակետով (երկու կետով) վերջակետի գործածությունը քաղաքացիություն է ստանում և շարունակվում մինչև մեր օրերը։

ԺԱ դարի տրոշ ձեռագրերում («Շողակաթ», տախտակ ԻԴ, ձեռագիր № 311, էջ 145բ, 1066 թ.) որպես տրոհման կետ, երբեմն վերջակետի, երբեմն էլ միջակետի իմաստով, գործածվել է կետ և ստորակետը միասին ուղղահայաց դրոշմամբ, իրար տակ գրված, իսկ 930 թվականի մի ձեռագրում («Շողակաթ», տախտակ ԻԹ, ձեռագիր № 2374, էջ 90ա) վերջակետից հետո ավելացված է մի ավելի փոքր գիծ հորիզոնական դիրքով։

Միջակետը և ստորակետը միասին որպես մի կետադրական տրոհական նշան հայ հետագա գրագրերում այլևս չենք հանդիպում, մինչդեռ նա ուսուցիչական և փոքր պահանջների շարք լեզունեղում հետագայում մտնում է կետադրական սխառնում և իր գոյությունը շարունակում մինչև մեր օրերը։

Հայերենում վերջակետը հաճախ զարդարվել է զանազան կետերով ու գծերով։ Այդ բոլոր դեպքերը դնել հնարավոր չէ։ Միայն պետք է ասել, որ ուսումնասիրված ձեռագրերի փաստերը ցույց են տալիս, որ գրագրերում վերջակետի զարդարման իմաստով կա գործածության շուրջ 12 դեպք։

Բ) ՄԻՋԱԿԵՏԻ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միջակետը (ըստ հենրի՝ «միջակ») հին քերականների մոտ և հայկական հին ձեռագրերում գործածվել է որպես կետադրական տրոհության նշան, որը տրոհել է համադասական նախադասության առանձին պարզ նախադասությունները միմյանցից, ուղղակի խոսքը՝ հեղինակի խոսքից և թվական արժեքով գործածվող տառերը՝ բնագրի մյուս բառերից։ Միջակետն ու ստորակետը քերականների կողմից համարվել են վերջակետի ծառան կամ սպասավորը։

⁵ Տե՛ս «Շողակաթ», տախտակ ԽԱ, ձեռագիր № 2600, էջ 179բ։

Ստեփանոս Սյունեցին միջակետի մասին գրում է. «Իսկ միջակ՝ (միջակետ — Հ. Մ.) նշան ոգի սակս ընդունելոյ. քանզի արգարես իսկ որպէս ոգի ի սմա առնու ընթերցողն, ի կախ ունելով զձայնն եւ ոչ ի հանգիստ իջուցանելով, զի այս ի վախճանին եղիցի⁶։ Սյունեցու սահմանման մեջ ուշագրավ է այն, որ նա նշում է միջակետի դադարի չափը։ Ըստ այդ սահմանման՝ վերջակետի վրա ձայնը հանգիստ իջնում է, որովհետեւ «բան»-ի (նախադասության) վախճանն է, վերջը, իսկ միջակետի ժամանակ ձայնը պետք է կախ գցել, որովհետեւ նախադասությունը դեռ չի ավարտված, այլ նրա կիսով չափ նախկին մասն է միայն վերջանում։ Այսպիսով, միջակետով տրոհվում են այն նախադասությունները կամ նախադասության այն մասերը, որոնք կիսանկախ միտք են արտահայտում, սակայն կապված են բարդ նախադասության մտքի հետ։

Նույն միտքը, գրեթե նույնությամբ, կրկնել են հետագա դարերի քերականները։ Քերականներից մեկը ընթերցողից պահանջում է միջակետի ժամանակ «ի կախ ունելով զձայն և ոչ ի հանգիստ իջուցանելով, զի այս ի վախճանին եղիցի» (Հայկական ՍՍԻ պետական մատենադարանի ձեռագիր № 2371)։

Ինչպես ուղղակի խոսքի, այնպես էլ թվական արժեքով գործածվող տառերի աջ և ձախ կողմերում դրվող միջակետի գործածությունը շարունակվում է մինչև տպագրության գլուխը և մասամբ էլ նրանից հետո մինչև ԺԸ դարի վերջերը։ Այս հարցում նույնպես եղել են խախտումներ, թվական արժեքով գործածվող տառերի աջ և ձախ կողմերում երբեմն դրվել է ոչ թե միջակետ, այլ կրկնակետ։

Գ) ՍՏՈՐԱԿԵՏԻ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կետադրության բաժնում, հին քերականների մոտ, ստորակետը համարվել է բարդ նախադասություններ և նախադասության առանձին անդամները տրոհող կետ ու իր դադարի փոքրությամբ ճանաչվել է վերջինը։

Անանուն մեկնիչը ստորակետը բնորոշում է այսպես. «Եւ դնէ զկէտն, որ կոչի ստորակէտ, որ տնի տկարութիւն հանգամ մտածողութեանն»։ Այսպիսով, ստորակետի պաշտոնը բնորոշելիս անցյալում հենվել են այն բանի վրա, որ նա չի կարող ցույց տալ մտածողության հանգումը, այսինքն՝ ստորակետով տրոհված առանձին անդամները կամ երկրորդական նախադասություններն առանձին վերցրած ամբողջական, ավար-

⁶ Ն. Ադոնցի հիշված աշխատությունում, էջ 197։

տուն միտք արտահայտել չեն կարող: Հին քերականները ստորակետը բնորոշելիս ելնում էին նաև նրա դադարի շափից. քանի որ ստորակետը նախադասության ավարտը չի ցույց տալիս, ուստի և դադարին հասնելուց դեռևս շատ հեռու է:

Ստեփանոս Սյունեցի քերականը ստորակետը համարում է նախադասության մտքի ավարտման և դադարի նախերգանքը, իսկ հետագա քերականները (ծայրի նշեցին և սլորշնեցը) ստորակետը չեն համարում «տրամախոհության հանգման» նշան, որովհետև նա «խորհուրդ» հայտնել չի կարող: Քերականներից մեկը գրում է. «և ստորակետ տրամախոյն չն'ե եւ յանկեցելոյ, այլ եւ կարաւացելոյ նշան», կամ՝ «Ե յաւարտմանէ խորհրդոյն մեծ ունի միջին կետն յորմէ կարի յոյժ հեռի է ստորակետին բան վասն միջասահմանին»՝ զի ինքն ընդ ինքեան ստորակետն ո՛չ կարէ յայտնել զխորհուրդն, քանզի յաւարտեալ կետն հասանելով, ի կարգի շարամանն լինի բացերևութիւն բանին: Ստորակետն նախերգան է» (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2373, էջ 53ա, 54բ):

Մի այլ քերական գտնում է, որ ստորակետով տրոհված հատվածը միտք չի արտահայտում: Այդ բանն ապացուցելու համար նա տրված օրինակ բերում է մի նախադասություն, ահա այն.

«Իսկ ստորակետ է, որ բանն վասն որոյ է յայտնի, որպէս որ ասես ընդ մարդ թէ գնա, և շատես թէ տ'ւր. և կամ ասես թէ առ, և չայտնես թէ զի՞նչ առնու» (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 1115, էջ 107բ):

Ստորակետ դրվել է՝

ա) նախադասության բաղմակի անդամների միջև, նրանք միմյանցից տրոհելու համար. օրինակ՝

«Եւ ի սոցանէ որք գիտեն դպրութիւն, եւրայեցիք, լատինացիք, տրով և հոմեր վարին, սպանիացիք, լոյնք, մարք, հայք, աղուանք» (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 8057, էջ 6, 1289 թ.):

բ) Թվարկությունների դեպքում, թվարկվող բառիմաստները կամ նախադասությունները միմյանցից տրոհելու համար. օրինակ՝ «Եւ վերծանելի է, ըստ անթաղութեան, ըստ առողջանութեանց, ըստ տրոհութեան» (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2373, էջ 1բ):

Ստորակետը քերականներն իրենց աշխատություններում հիշատակում են դեռևս ե— է դարերից սկսած: Լազարյան ձեռարանի Ավետարանում և էջմիածնի փղոսկրակազմ Ավետարանում (Թ—ժ դարեր) մենք հանդիպում ենք ստորակետի գործածության բազմաթիվ դեպքերի: Թե՛ Լազարյան ձեռարանի և թե՛ էջմիածնի համրավավոր Ավետարաններում կան մի շարք դեպքեր, որտեղ գործածված ստորակետն իր ձևով ամբողջովին նման է այսօրվա գործածական ստորակետին (,): Ծիշտ է, Լազարյան ձեռարանի Ավետարանում նա թվով սահմանափակ է, իսկ էջմիածնի Ավետարանում արդեն բավականաչափ շատ է:

Էջմիածնի Ավետարանի կետադրությունը ապացույց է այն բանի, որ ստորակետն իրոք այժմյան ձևով և դիրքով գործածվել է շատ վաղուց: Չենք կարծում, որ ստորակետը մուտք է գործել ժ դարում, հավանաբար այն գործածվել է նախորդ գրչագրերում ևս: Դժբախտաբար ե—Ը դարերի ձեռագրերը մեզ չեն հասել, և մենք ղժվարանում ենք ասել՝ ինչպե՞ս, ո՞ր դարից և ո՞ր ձևագրերում է գործածվել ստորակետը: Առաջին գրավոր վավերագրերը ցույց է տալիս, որ ստորակետն առկա է եղել և գործածվել է Թ դարից, իսկ ավելի հաստատված դարից:

Համամ Արևելացու մոտ ստորակետով են տրոհված կոչականները. օրինակ՝ «Ջայս պատուիրեմ քեզ, որդեակ իմ Տիմոթէոս»:

Ռուս բանասեր Վ. Կլասովսկին ստորակետի գործածության սկիզբը ուսումնական գրականության մեջ համարում է Ժ2 դարը⁸:

Հետագա դարերի հայկական ձեռագրերում ստորակետը կամաց-կամաց տրոջակի ձև է ստանում, վերջնականապես դառնում է բարակ պոչավոր, փոքր գլխիկով մի կետ տարբերվելով միջակետից:

Որպես հզորացություն կարելի է ասել, որ ստորակետի, միջակետի և վերջակետի տարրոշումը ձևի տեսակետից սկսվում է ժ դարից և հետագայում աստիճանաբար որոշակի և համատարած է դառնում ու շարունակվում է մինչև մեր օրերը:

Սակայն վերջակետի, միջակետի և ստորակետի գործածության դեպքերը վերջնականապես ծավալվում և կարգավորվում են աշխարհաբարի շրջանում:

7 Ն. Աղոնցի հիշված աշխատությունում, էջ 255:

8 Վ. Կլասովսկու հիշված աշխատությունում, էջ 3:

